Ուսուցիչների ատեստավորում

Քննադատական մտածողության զարգացումը Տարրական դասարաններում

Հետազոտող ուսուցիչ՝ Ջավահիր Ղումաշյան

Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց

2022 թ.

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Հետազոտության նպատակը , խնդիրները---------- 4

Արդիականությունը---------- 4

Գլուխ 1. Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը--5

Գլուխ 2. Քննադատական մտածողության զարգացումը տարրական դասարաններում---------- 9

Եզրակացություն---------- 17

Օգտագործված գրականության ցանկ---------- 18

Ներածություն

Մարդկության պատմության զարգացման ընթացքում միշտ էլ կարևոր նշանակություն է տրվել կրթությանը։

Քննադատական մտածողության զարգացումը տարրական դասարաններում սովորողների կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց է։

Թեմայի արդիականությունը պայմանավորնած է նրանում, որ ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ ունենալով ինքնուրույն և ինքնատիպ մտածելակերպ։

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել և նպաստել քննադատական մտածողության զարգացմանը տարրական դպրոցում։

Նպատակից բխող **խնդիրներն են.**

- դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունները տարրական դպրոցում,
- հիմնավորել քննադատական մտածողության զարգացումը։

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության **նպտակը՝** տարրական դպրոցում քննադատական մտածողության կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է, որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող մակավարժական գործոն:

Խնդիրները.

- դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը տարրական դպրոցում,
- հիմնավորել քննադատական մտածողությունը, որպես ակտիվ մանկավարժական միջոց, որը կնպաստի կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը:

Արդիականությունը

Արդի մանկավարժական մոտեցման նպատակն է ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մացնակիցներ: Դրա շնորհիվ սովորողները դառնում են ավելի անկաշկանդ և ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլումն ու վերարտադրման գործընթացն է, որն ապահովում է ճշմարտության իմացում, ցանկացած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Տվյալ հետազոտության շրջանակներում քննադատական մտածողություն հասկացությունը ուսումնասիրվել է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգաացման տեսանկյունից՝ ապահովելով նպաստավոր մանկավարժական պայմաններ սովորողների բնականոն զարգացման համար։

Գլուխ 1. Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը

Կրթությունը միշտ եղել է հասարակության կյանքի անբաժանելի մասը։ Կրթությունը մարդկային գոյության անհրաժեշտություն է , որի խնդիրն է մշակույթային արժեքների օգնությամբ ձևավորել մարդու կիրթ կերպար։

Կրթությունը միշտ նպատակ է ունեցել ձևվորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ։ Սակայն հասարակության զարգացմանն ու փոփոխությանը զուգահեռ ձևավորվել են տվյալ ժմանակաշրջանում նոր կրթական խնդիրներ։

Պատմության զարգացման ընթացքում կրթական խնդիրները փոխվել են՝ պարզ գիտելիքների կուտակումից մինչև ճանաչողական, ստեղծագործական կարողությունների ձևավորում։ Կթական խնդիրների փոփոխումը հանգեցնում է նաև կրթության բովանդակության, ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների փոփոխության, ինչը համարվում է առաջադրված խնդիրների լուծման միջոցներ, որն էլ շեշտվում է մանկավարժական գրականության մեջ։

Կրթության նպատակն ու խնդիրները բոլոր դարաշրջաններում բխել են հասարակության նպատակից և պայմանավորված են եղել հասարակության պահանջով։ Կրթության նպատակը միշտ անփոփոխ է՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ հասարակության համար ակտիվ,

լիարժեք անդամ։ Սակայն կրթության խնդիրները անընդհատ փոփոխվել են՝ կապված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, հասարակության տնտեսական, գիտական, մշակույթային զարգացմամբ։ Հետևաբար, կրթության նպատակը պետք է լինի ավելի համընդհանուր, իսկ կրթության խնդիրներն ավելի հստակ՝ համապատասխան տվյալ ժամանակաշրջանի հասարակական պահանջներին։

Այժմ կարևորվում է ոչ միայն գիտելիքների տիրապետելու ու դրանք կիրառելու, այլև նորին համընթաց գնալու, գիտելիքները համալրելու, նոր տեղեկատվությանը տիրապետելու պահանջը։ Այսօր անհրաժեշտ են այնպիսի մասնագետներ, ովքեր ոչ միայն բանիմաց են, այլև նախաձեռնող, ինքնուրույն գործող՝ գիտելիքները համալրելու և գիտության նվաճումներին տեղեկանալու, դրանք ստեղծագործաբար կիրառելու կարողություններով։

Այսօր ժամանակակից հասարակությանը պետք է այնպիսի կրթություն, որը կկարողանա հնարավորինս բավարարել հասարակության պահանջները, որը հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա զարգացող ու փոփոխվող աշխարհում քայլել այդ փոփոխություններին համընթաց՝ անընդհատ զարգացնել մտավոր կարողությունները, լինել նախաձեռնող ու ստեղծագործական մոտեցում ցուցաբերել կյանքի տարբեր բնագավառներում։

Ժամանակակից կրթության մեջ գլխավոր է համարվում ոչ թե գիտելիքների պաշարն ու ունեցած գիտելիքները կիրառելու համար համապատասխան կարողությունները, այլև ողջ կյանքի ընթացքում մարդու ակտիվությունն ու ինքնուրույնությունը։ Այսօր մանկավարժական գործընթացը միտված է ապահովել և ստեղծել սովորողների առողջության և բնական զարգացման համար համապատասխան պայմաններ՝ խթանելով աշակերտների ակտիվությունն ու ստեղծագործական մտածողությունը, բացահայտել և ուսուցման ընթացքում զարգացնել նրանց ներքին հնարավորությունները։

Մտածողությունն ըստ հոգեբանության կարևոր, բարդ ու դժվարին բնագավառներից է։ Որևէ խնդիր անկարելի է լուծել առանց մտածողության։ Մտածողությունը ոչ միայն հնարավորություն է տալիս խորությամբ ճանաչել արտաքին աշխարհը, այլև ներթափանցել հոգեկան երևույթների ու հատկությունների ներքին շերտերը, պարզել

էությունը, բացահայտել իրականության խորհրդավոր գաղտնիքները և համապատասխան լուծում տալ։ Մտածողությունն իրականության, իրերի և առարկաների, էական հատկությունների, կապերի ու հարաբերությունների ընդհանրացված իմացությունն է։ Նրա միջոցով մարդը ներթափանցում է երևույթների խորքերը և բացատրություն գտնում։ <<Մտածողությունը իրականության ընդհանրացված, վերացական, միջնորդավորված արտացոլումն է, ճանաչողության գործընթացի բարձրագույն ձևը>>[1]։

Մտածողությունը միաժամանակ նորի որոնման ու հայտնագործման, իրականության վերաիմաստավորման ու ստեղծագործբար զարգացման հոգեկան գործընթաց է։ Մտածողության առանձնահատկություններից է նաև, որ այն ձևավորվում է լեզվական հիմքի վրա։ Մարդկային միտքն արտահայտվում է խոսքի միջոցով։ Խոսքը մտքի դրսևորման հիմնական ձևն է։ Խոսքն ու մտածողությունը միասնական են։

Երեխայի հոգևոր զարգացման խնդրում հիմնական ու վճռական դերը պատկանում է գործունեությանը։ Աշխատանքի ընթացքում է ուղեղը զարգանում և ենթարկվում որակական փոփոխությունների։ Երեխայի մտածողության զարգացումը պայմանավորված է գործունեությամբ, ապա վերջինս էլ թելադրվում է աշակերտ պահանջմունքներով։ Պահանջներն ու ցանկությունները երեխայի առջև կոնկրետ խնդիրներ են դնում և ստիպում նրան պլաններ կազմել, ուղիներ փնտրել և գտնել հետաքրքրող հարցերի պատասխանը։ Որն էլ սովորողի մտածողությանը հաղորդում է խորություն, ճկունություն, հեռատեսություն, կողմնորոշման կրողություն։

Մտածողության զարգացման ընդհանուր պահանջներից բացի, առանձնահատկություններ են նկատվում տարիքային տարբեր շրջաններում։ Կրտսեր դպրոցականն ունի իր զարգացման բնախոսական, կազմախոսական, տարիքային և այլ շատ առանձնահատկություններ։ Կրտսեր դպրոցականի մտածողության զարգացմանը նպաստող հիմնական միջոցը համակարգված ուսուցումն է։

Կրտսեր դպրոցական տարիքում կարևոր գործառույթ է երեխայի մտածողության զարգացումը, պատկերավոր մտածողությունից վերացական մտածողության անցումը,

[1] Ատենախոսություն։ Ալեքսանյան Լյուդվիգ Պետրոսի <<Կրտսեր դպրոցականի մտածողության զարգացումը ուսուցման գործընթացում>>։ Ե.-2002, էջ 22, ԵՊՀ։

այս ամենը պետք է իրականացնել կոնկրետ փաստերի, ակնառու նյութերի հիման վրա, որպեսզի այն հասանելի լինի աշակերտների դատողական մտածողությանը: Երեխան պետք է սովորի իմաստավորել ուսումնական նյութը, հասկանալ, քանի որ մտածելու, իմաստավորելու ընթացքում նյութն ամրակայվում է երեխայի հիշողության մեջ: Նյութը հասկանալով մտապահելու կարողությունը զարգացնելու համար ուսուցիչը տեքստը բաժանում է իմաստային մասերի, քննարկում և բացատրում: Անհրաժեշտ է ձևավորել նյութի մտապահման այս կարողությունը:

Քննադատական մտածողության համար կարևոր է նաև նրանց զարգացած խոսքը: Աշակերտների խոսքը զարգացնելու համար հանձնարարվում է կազմել նախադասություններ, հորինել պատմություններ որևէ նկարի, սեփական դիտումների վերաբերյալ: Աշակերտների մոտ պատկերավոր մտածողություն և զարգացած խոսք ձևավորելու նպատակով կարելի է կիրառել հետևյալ մեթոդը. խմբային կամ անհատական տարբերակով կարող ենք տալ ուսուցանվող թեմային վերաբերող անգույն նկար, հանձնարարել, որ նրանք հորինեն պատմություն նկարի շուրջ, մեկնաբանեն այն, ապա գունազարդեն նկարը, քանի որ նկարելու ընթացքում երեխան ևս մեկ անգամ վերհիշում է կարդացածը, մտքում պատմում, մտորում երևույթի շուրջ, ինչը հնարավորություն է տալիս զարգացնել սովորողի ներքին խոսքը: Այս եղանակով կզարգանա աշակերտների վերացական մտածողությունը, և նրանք իրենց մտածածն ու զգացածը կարող են ներկայացնել ոչ միայն նկարի միջոցով, այլև խոսքով: Ավարտված աշխատանքները կպահվեն հատուկ թղթապանակում: Նմանատիպ աշխատանքներ կարելի է կազմակերպել նաև տանը՝ համագործակցելով ծնողների հետ:

Սովորողների ստեղծագործական մտածողության կրողությունները զարգացնելու համար խմբային համագործակցության միջոցով հորինում ենք բանաստեղծություններ, զվարճալի պատմություններ, հեքիաթներ և այլն:

Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցում, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարաններում: Գրքերի թեման պետք է համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին, լինի ոչ ծավալուն: Ընթերցանության և ուսուցման համար ընտրված թեմաները պետք է

լինեն հայրենիքի, հերոսական սխրանքների,աշխատասիրության, բարեկամության, պատվախնդրության, բարության, ճշմարտության, պատասխանատվության վերաբերյալ, որպեսզի ուսուցման ընթցքում հնարավոր լինի երեխայի անձի ձևավորումն իրականացնել բարոյական բարձր չափանիշներին համապատասխան:

Դասագրքի բնագրերի նյութերը պետք է լինեն նպատակային, որոնց միջոցով աշակերտների մեջ պետք է ձևավորվեն բարոյական բարձր արժեքներ՝ բարություն, ազնվություն, մեծահոգություն, լավատեսություն, հանդուրժողականություն, ազգային ինքնագիտակցություն և այլն:

Գլուխ 2. Քննադատական մտածողության զարգացումը տարրական դասարաններում

Սովորողների խոսքի զարգացմանը զուգահեռ պետք է զարգացնել նաև քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողության հիմքերը թեև գալիս են դեռ հին Հունաստանից, այնուամենայնիվ դրա կարևորությանը որպես ժամանակակից հասարակության անդամին անհրաժեշտ որակ առավել մանրամասն անդրադարձել են 20-րդ դարի վերջին:

Մտածողությունը նորի որոնման գործընթաց է, որը սերտորեն կապված է խոսքի հետ և իրականացվում է վերլուծության ու համադրության միջոցով:

Քննադատական մտածողությունը ժամանակակից մանկավարժության մեջ շատ այլ հասկացությունների նման դեռևս չունի բոլորի կողմից ընդունված մեկ միասնական սահմանում: Քննադատկան մտածողությունը ճանաչողության գործընթաց է: Այն բնորոշվում է ճանաչողական հետաքրքրությամբ, մտքի ճկունությամբ, կշռադատելու կրողությամբ՝ ձևավորելով ինքնուրույն եզրահանգումներ անելու, սեփական որոշումների հետևանքները կանխատեսելու և կատարված ընտրության համար պատասխանատվություն կրելու կարողություններ: Քննադատական մտածողության

դեպքում կարևոր է նաև մտապահումը, առանց որի ուսուցման գործընթացը անհնար է պատկերցնել, որն էլ համարվում է քննադատական մտածողության առաջին քայլը։ Քննադատական մտածողությունը նպատակաուղղված, կշռադատված ու տրամաբանված մտածողություն է, որի դեպքում երևույթները դասակարգվում են ըստ հավաստի փաստերի, դատողությունները լինում են հիմնավորված ու ծանրակշիռ, իսկ եզրակացությունները տրամաբանորեն ձևակերպված՝ փաստերի ու երևույթների քննադատական վերլուծությամբ։

Քննադատական մտածողությունը որոշ դեպքերում նմանեցվում է նաև ստեղծագործական մտածողությանը։ Քննադատական և ստեղծագործական մտածողությունները, տարբերվելով վերարտադրողական մտածողությունից և ունենալով բազմաթիվ ընդհանրություններ, չեն նույնացվում։ Մտածողության երկու տեսակներն էլ կարևոր են ու անհրաժեշտ, երկուսն էլ զարգացնում են սինթեզի ու փոխկապվածության մեջ։

Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման նպատակով ժամանակակից ամերիկացի հոգեբան-մանկավարժ Դեյվիդ Քլուսթերը կարևորում ու առանձնացնում է քննադատական մտածողությանը բնորոշ 5 հիմնական դրույթներ։

Քննադատական մտածողությունը.

- ✓ ինքնուրույն մտածողություն է,
- ✓ սկսվում է հարցադրումից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից,
- ✓ պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորման,
- ✓ ունի հաստատական ուղղվածություն,
- ✓ քննադատական մտածողության համար գիտելիքը /ինֆորմացիան/ ոչ թե արդյունք է, այլ նրա խթանն ու 1-ին քայլը։

Քննադատական մտածողության շնորհիվ ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզ մտապահումից և վերարտադրումից փոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության։ Այն ուղղված է խելամիտ դատողություններ կատարելուն։ Աշակերտները կատարում են լուրջ մտավոր աշխատանք՝հարցեր առաջադրելու, քննարկելու, բանավիճելու միջոցով և հանգում են կյանքի առաջադրած խնդիրների

ճիշտ լուծմանն ու հիմնավորված դատողությունների: Սովորողներից յուրաքանչյուրն ինքն է որոշում, թե ինչպես մտածի և ինչպիսի եզրահանգումներ անի: Քննադատական մտածողության արդյունքում ձևավորված ամեն միտք, ստուգվում և հղկվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ: Երբ կարդում, քննարկում, ժխտում, հաստատում կամ կարծիքներ են փոխանակում, անպայման ճշտում և հստակեցնում են նաև սեփական դիրքորոշումները:

Արդի պայմաններում կարևորելով քննադատական մտածողության դերը, առանձնացվում ու շեշտադրվում են այն որակները, որոնք բնորոշ են քննդատաբար մտածող մարդուն: Քննադատական մտածողությունը օգնում է սովորողներին. <<գնահատել գաղափարների, մոտեցումների արժեքը կամ արդյունքները, նախքան որոշումներ կայացնելը կամ տեսակետ ձևակերպելը>>[2]:

Քննադատաբար մտածող մարդուն հատուկ են հետևյալ գծերը.

- հետաքրքրասիրություն, ճանաչողական կարողությունների առկայություն, ակտիվություն և ինքնուրույնություն,
- իրավիճակը ամբողջության մեջ տեսնելու կարողություն, խնդիրը ճշգրիտ պատկերացնելու և լուծման ընթացքում այն տեսադաշտում պահելու կարողություն, ինչպես նաև հարցի լուծման նոր եղանակների ընտրություն,
- տարբեր աղբյուրներից տեղեկություն ձեռք բերելու և ստացված տեղեկությունը վերլուծելու, համադրելու, դատողություններ, եզրահանգումներ անելու կարողություն,
- կարծիքները քննարկելու, փաստեր առաջադրելու, ապացույցներ փնտրելու և սեփական կարծիքը հիմնավորելու կարողություն,
- խմբերում աշխատելու կարողություն, հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու և ղեկավարելու համար անհրաժեշտ կարողություն և հմտություն,
- դիմացինին ուշադիր լսելու, մարդկանց հարգելու, համբերություն, հանդուրժողականություն դրսևորելու կարողություն:

[2] Ատենախոսություն, Հարությունյան Գայանե Նորիկի << Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում>>: Ե.-2014, էջ 71:

Քննադատական մտածողության զարգացման ու ժամնակակից մանկավարժության տեսանկյունից կարևորվող համապատասխն կարողություններով օժտված հասարակության լիարժեք անդամի ձևավորման ուղղությամբ այսօր մանկավարժության մեջ լուրջ աշխատանքներ են իրականացվում: Քննադատական մտածողության զարգացման ողղությամբ տարվող բոլոր աշխատանքների ժամանակ առկա է.

- նպատակների հստակ նախագծում ու մշաակում,
- քայլերի հերթականության ճշգրտություն,
- յուրացման նյութի համակարգում և հստակեցում,
- դիդակտիկական, տեխնիկական միջոցների կիրառություն:

Թվարկված կետերը հնարավորություն են տալիս քննադատական մտածողության զարգացման ուղղությամբ տարվող աշխտանքներն ամբողջության մեջ դիտարկել:

Քննադատական մտածողությունը մանկավարժության ժամանակակից տեխնոլոգիա է, որն ունի հին պատմական արմատներ: Քննադատական մտածողության զարգացման հիմքում ընկած է հայտնի հին հույն փիլիսոփա մանկավարժ Սոկրատեսի կողմից առաջարկած ուսուցման սոկրատյան հարցադրումների մեթոդը, որի ժամանակ չէին հաղորդվում պատրաստի գիտելիքներ և սովորողին հնարավորություն էր տրվում ինքնուրույն կատարել եզրահանգում:

Քննադատականմտածողության զարգացման գործում մեծ նշանակություն են ունեցել ակտիվ ուսուցման մի շարք տեխնոլոգիաներ: Քննադտական մտածողության տեխնոլոգիայի կիրառման ընթացքում կարևոր է, կատարել ուսումնական որոնողական աշխատանքներ, ստեղծել այնպիսի պրոբլեմային իրավիճակներ, փնտրել հարցադրումների լուծումները որոնելու ու գտնելու ուղիները, կապ ստեղծել նոր գիտելիքների և սովորողների անձնական կենսափորձի միջև: Մանկավարժական գործընթացը դիտարկել, որպես աշակերտակենտրոն գործընթաց:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում, կշռադատում, որը հաճախ ներկայացվում է հապավումներով՝ որպես ԽԻԿ համակարգ: Այս համակարգն ուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր է հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով[3]: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի ԽԻԿ համակարգի յուրաքանչյուր փուլ ոունի իր նպատակներն ու իրականացման առանձնահատկությունները: Խթնման փուլում ուսուցիչը քիչ է խոսում, լսում է սովորողների բոլոր կարծիքներն ու տեսակետները՝ նպաստելով սովորողների ակտիվությանը, հետաքրքրության առաջացմանը: Այս փուլում հիմք է դրվում հետագա աշխատանքի արդյունավետության համար: Իմաստի ընկալման փուլում, երբ սովորողները արդեն վեր են հիշել իրենց գիտելիքները այդ թեմայի վերաաբերյալ ու նախապատրաստվել նոր նյութի յուրացմանը, կատարվում է նոր նյութի մատուցման բուն գործընթացը: Այս փուլում սովորողներն արդեն անմիջական շփման մեջ են մտնում նոր ինֆորմցիայի, նոր նյութի հետ, որը կարող է իրականացվել տարբեր եղանակներով: Իմստավորման փուլում ուսուցչի ազդեցությունը սովորողի վրա փոքր է՝ սովորողները ավելի ինքնուրույն և ակտիվ են: Կշռադատման փուլի ընթացքում կատրվում է. <<գիտելիքների <<սեփականացում>>, և դրա հիմքում ձևավորվում է սեփական հիմնավորված պատկերացում ուսումնասիրվող նյութի մասին>>[4]: Այս փուլում սովորողները փորձում են վերլուծել, ամփոփել, հին և նոր գիտելիքները, կատարել եզրահանգում տվյալ նյութի վերաբերյալ: Քննադատական մտածողության ժամանակ կշռադտման փուլը հնարավորություն է ընձեռում ստացված գիտելիքները վերլուծել, համեմատել, համադրել արդեն ունեցած գիտելիքների հետ, առանձնացնել կարևորը երկրորդականից, կարծիք հայտնել, գալով համապատասխան եզրահանգման:

---

[3] Ատենախոսություն: Հարությունյան Գայանե Ն. <<Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում>>: Ե.-2014, էջ 74:

[4] Ատենախոսություն: Հարությունյան Գայանե Ն. << Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում>>: Ե.- 2014, էջ 75:

Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառությունը որպես սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված մանկավարժական տեխնոլոգիա առավել արդյունավետ է դիտարկել՝ ելնելով հետևյալ տեսանկյուններից.

- առարկայական /ինչ և ինչ նպտակով ենք սովորում/, որն անմիջականորեն առնչություն ունի ճանաչողությն գործընթացի նպատակի և յուրացվող նյութի բովանդակության հետ,
- տեխնոլոգիական /ինչպես ենք սովորում/, որը ենթադրում է համապատասխան պայմանների ստեղծում, մեթոդների, սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի ընտրություն՝ վերարտադրողական, որոնողական, հետազոտական, ստեղծագործական գործունեություն, որը կարող է իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի միջոցով,
- սուբյեկտիվ /ինչ անձնական ձեռքբերման համար ենք սովորում/, որը նպաստում է ամեն մի երեխայի զարգացմանը՝ կարևորելով յուրաքանչյուր երեխայի սուբյեկտիվությունն ու անձնական ձեռքբերումները, կապ ստեղծելով սովորողի անձնական փորձի ու ճանաչողական գործընթացում յուրացվող նյութի մեջ։

Վերը նշված երեք կողմերը փոխկապակցված են, քանի որ ընտրությամբ է որոշվում մյուսների ընտրությունը՝ ապհովելով սպսվելիք դրական արդյունքը։

Տարրական դպրոցում քննադատական մտծողության զարգացման համար շատ կարևոր է ուշադրություն դարձնել մանկավարժական գործընթացում իրականացվող հարցադրումների հիմնախնդրին։ Հարցադրումները պետք է խթանեն աշակերտների մտավոր աշխատանքը, նպաստեն ճանաչողական կարողությունների զարգացմանը, օգնեն հասկանալ, որ իրենց մտածելը կարևոր է և իրենք էլ կարող է ունենալ արժեքավոր մտքեր։ Առաջադրվող հարցերն աշակերտներին պիտի ներգրավեն իմստավորված քննարկումների մեջ։ Այդպիսի հարցերից կարելի է առանձնացնել հետևյալ հարցերը, որոնք ձևակերպված են հայտնի հույն փիլիսոփա Սոկրատեսի ոճով՝ ինչ նկատի ունեք,

ինչպես հանգեցիք այդ կարծիքին, ինչը նպաստեց տվյալ եզրահանգմանը, արդյոք ձեր ասածը համապատասխանում է ճշմարտությանը և այլն։

Ամերիկացի հայտնի հոգեբան-մանկավարժ Բ.Բլումի մշակված հարցերը բաժանվում են մի քանի խմբի[5]։

Փաստերին վերաբերող հարցադրումները նպատակ ունեն բացահայտել սովորողների կողմից փաստերի իմացությունը, ինչը սովորողից պահանջում է բովանդակության կամ գիտելիքների վերարտադրում։

Զևափոխված հարցերը սովորողից պահանջում են ստացած գիտելիքներն արտահայտել սեփական բառերով։ Այս դեպքում կարևորվում է աշակերտների մոտ առաջացած զգացմունքներն ու տպավորությունները կապված նյութի հետ։

Մեկնաբանության հարցերի միջոցով աշակերտները մտովի կապեր են ստեղծում գաղափարների, փաստերի, արժեքների միջև՝ իմաստավորելով պատճառահետևանքային կապերը։ Սովորողը սկսում է մտածել գաղափարների և հասկացությունների փոխկապակցվածության մասին։

Կիրառության հարցերը աշակերտին մղում են քննարկումների, որի արդյունքում սովորողները գտնում են առաջադրվող խնդիրների լուծումները՝ հիմնվելով տրամաբանության վրա։

Վերլուծական հարցերը մղում են նույն երևույթը այլ տեսանկյունից դիտարկել, նյութին տալով տրամաբանական բացատրություն։

Համադրության հարցերը հնարավորություն են տալիս առաջադրված խնդիրները լուծել ստեղծագործաբար՝ օգտագործելով ունեցած գիտելիքների և փորձի ողջ բազմազանությունը։

Գնահատման հարցերը սովորողին հրավիրում են լավ ու վատի մասին դատողություններ ու եզրահանգումներ անել՝ որպես ելակետ ընդունելով սեփական

[5] Ատենախոսություն։ Հարությունյան Գայանե Ն. << Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում>>։ Ե.-2014, էջ 78։

չափանիշներն ու անձը, փորձն ու զգացմունքները։ Այս հարցերը աշակերտին մղում են ստացած տեղեկատվության որակական գնահատմանը։

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի շրջանակներում իրականացվող մեթոդները ուսուցման նպատակին հասնելու ուղիներ են, որոնք հնարավորություն են տալիս գիտելիք հաղորդել, գիտելիքը դարձնել կիրառելի, սակայն դրանք չեն կարող նույնացվել մանկավարժության մեջ ընդունված, հայտնի և կիրառվող ուսուցման գործընթացի մեթոդների հետ, քանի որ դրանք ունեն այլ պայմաններ և ընթացք։ Այդ մեթոդներից յուրաքանչյուրն ինքնուրույն ու ամբողջական է, ունի նպատակներ ու կիրառման հստակություն, քայլերի հերթականություն, դիդակտիկան միջոցների կիրառելիություն։ Քննադտական մտծողության զարգացման տեխնոլոգիայի մեթոդներից ամեն մեկն իր հերթին նախանշված նպատակին հասնելու ճանապարհ է, որն իր մեջ պարտադիր ամփոփում է քննադատական մտածողության տեխնոլոգիայի սուբյեկտիվ կողմը՝ ապահովելով աշակերտների ակտիվ մասնակցությունն ու ուսուցման արդյունավետությունը։

Եզրակացություն

Քննադատական մտածողության հասկացությունը իր մեջ ներառում է մի շարք մանկվարժական տեխնոլոգիաներ՝ պրոբլեմային ուսուցում, կոլեկտիվ և խաղային ուսուցման որոշակի տարրեր, խթանում է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը և ուսումնական ակտիվությունը։

Քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կիրառվել տարրական դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական որոշ պայմանների դեպքում.

—բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,

—ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,

—դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,

—ուսուցման գործընթացում մեթոդների ճիշտ ընտրություն։

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Լ. Պ., << Կրտսեր դպրոցականի մտածողության զարգացումը ուսուցման գործընթացում>>: Ե.-2002:

2. Հարությունյան Գ. Ն. <<Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում>>: Ե.-2014:

3.Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Համագործակցային ուսուցում, ձեռնարկ: Ե.-2006:

4.Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ մանկ. ինստ. համար: Ե.-1974թ.: